Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ. 33 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակի 1.17 դրույքի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցակցվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1)
- 3x4 չափի լուսանկար 1 հատ
- Անձը հաստատող փաստաթուղթ
- Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում)
- Ինքնակենսագրություն (Ձև 4)
- Այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթղթող:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. դեկտեմբերի 6 - ից մինչև 2025թ.-ի հունվարի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09^{00} ից մինչև 16^{30}, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. հունվարի 10-ին, ժամը՝ 13 ^{00}-ին, «Երևանի հ.33 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Արամ Խաչատրյան 28/1:

Տեղեկությունների համար զանգահարել 010 22- 64 -57 հեռախոսահամարով: